ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 14 » ապրիլի 2016 թ. N 104-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻՆ «ՌՈԴԻՖԱԿՈՒՄ Ս» ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից 2016 թվականի գարնանը Հայաստանի Հանրապետության մարզերի բարձրադիր գոտում կատարված մոնիթորինգի արդյունքները՝ մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով.

Հրամայում եմ՝

1. Հաստատել 2016 թվականի գարնանը մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումների իրականացման համար Հայաստանի Հանրապետության մարզերին հատկացվող «Ռոդիֆակում Ս» բույսերի պաշտպանության միջոցի բաշխացուցակը՝ համաձայն հավելվածի:

2. Կազմակերպության տնօրեն Ա. Ավագյանին՝

1) ապահովել «Ռոդիֆակում Ս» բույսերի պաշտպանության միջոցի տեղափոխումը Հայաստանի Հանրապետության մարզկենտրոններ և անհատույց հանձնումը մարզպետարաններին կամ վերջիններիս կողմից լիազորված անձանց՝ սույն հրամանի հավելվածով սահմանված չափաքանակով,

2) յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդող ամսվա 10-ը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել հաշվետվություն օգտագործված «Ռոդիֆակում Ս» բույսերի պաշտպանության միջոցի քանակության վերաբերյալ:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի առաջին տեղակալ Գ. Բաղիյանին և նախարարի տեղակալ Ս. Գալստյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված

ՀՀ գուղատնտեսության նախարարի
2016 թվականի ապրիլի ____ -ի N _____ -Ա հրամանի

ԲԱՇԽԱՑՈՒՑԱԿ

2016 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԸ ՄԿՆԱՆՄԱՆ ԿՐԾՈՂՆԵՐԻ ԴԵՄ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ «ՌՈԴԻՖԱԿՈՒՄ Ս» ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ

Մարզը	Տարածությունը (հա)	Բույսերի պաշտպանության միջոցի քանակը (կգ)
Արագածոտն	2600	208
Գեղարքունիք	1387,5	111
Լոռի	2175	174
Կոտայք	2300	184
Շիրակ	2837,5	227
Սյունիք	2675	214
Վայոց ձոր	250	20
Ընդամենը	**14225**	**1138**